



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա. ՌԵՑԻՐՈՒԴ

Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն
ԻՆՔՆԱԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՊԻՌՆԵՐ ԱԿՏԻՎԻ ՀԵՏ



ԳԵՏՏՈՐԱՎԾ

ՅԵՐԵՎԱՆ-1933



Ա. ՌԵՑԻՐՈՒԴ

ՅԿՅՈՒ
Բ

ՄԱՆԿԱԿԱՆ
ԻՆՖՈՐՄՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՊԻՇՆԵՐ ԱԿՏԻՎԻ ՀԵՏ

A —
ԿԿՕԿ



ՅԵՐԵՎԱՆ - 1933

Պատ. խմբագիր՝ Արմեն Հարենց
Տեխ. խմբագիր Գ. Զենյան
Թարգմանեց՝ Վ. Թերզիքաշյան
Սրբազնեց՝ Ռ. Դաստիարակչան
Հրատ. № 255:

Պահբառի տպարան, Գ. ավլիա 8148 թ) Պատվեր № 1312, Տիբու 2000

Հանձնված և արտադրության 28 մայիսի 1933 թ.
Մտաբազմված և լույս գրելու 25 հունիսի 1933 թ.

1. ԽՆՔՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՆՐԱ ՃԱ-
ՆԱՊԱՐՀԻՆ ՑԵՂԱԾ ԱՐԴԵԼԱԿՆԵՐԸ

ՄԵՆՔ ՀԵՆՔ կարող յերեխաների ինքնա-
դործության զարգացման և պիտոներական ակ-
տիվի հետ տարվելիք աշխատանքի հարցը
քննել առանց կոնկրետ կերպով կապակցելու
այդ հարցը այն նոր պայմանների հետ, վո-
րոնց մեջ ընթանում է մեր կազմակերպության
զարգացումը։ Սոցիալիստական շինարարու-
թյան հաջողությունները, կոլեկտիվացման
բուռն աճումը, կուլակության վերացումը
վորպես դասակարգի և այս ամենի հետ կապ-
ված դասակարգային պայքարի սրումը մեր
յերկրում ստեղծում են այնպիսի պայմաններ,
վորոնք տարբերվում են այն պայմաններից,
վորոնց մեջ ընթանում եր մեր կազմակերպու-
թյան զարգացումը սրանից յերեք-չորս տարի
առաջ։

Պիտիներ կազմակերպության մեջ ինքնա-
դործության պրոբլեմը նոր չե։ Սակայն այդ
պրոբլեմը յերբեք այնքան սուր չի դրվել մեր
առաջ, ինչպես այժմ։ Այդ բացատրվում ե
նրանով, վոր նոր պայմանները ստեղծում են
նոր հնարավորություններ մեր աշխատանքի
ծավալման համար, զնում են նոր խնդիրներ
և ստիպում են նոր ձեվով քննել ինքնագործու-
թյան հարցերը։

Ի՞՞նչ Ե ԱՐԴԵԼԱԿՈՒՄ ԻՆՔՆԱԴՈՐԾՈՒԹՅԱՆ
ԶԱՐԴԱՑՄԱՆԼ

Կարո՞ղ ենք արդյոք ասել, վոր պիոներական կազմակերպություններն արդեն ձեռք են բերել վորոշակի բեկում ինքնազործության ծավալման մեջ, վոր մեզանում արդեն իրոք տեղի յե ունեցել բեկում յերեխաներին մեր կազմակերպության՝ ղեկավարման գործում ներգրավելու ուղղությամբ, վոր իրոք կենսագործվել ե՝ «Պիոներները պետք ե լինեն իրենց կազմակերպության տերերը» լոգունգը։ Վորոշ առաջադիմություն, իհարկե կա։ Այդ առաջադիմությունը հնարավորություն և տալիս մեղ նախապես նշել միջոցառումների վորոշ մի սխտեմ, — ինքնազործություն, և ակտիվի հետ տարվելիք աշխատանքի վճռական ծավալման համար։

Սակայն բեկում դեռևս չկա։

Ինչ ե ինքնազործությունը և այն ինչպես ե դրված մեր պիոներական կազմակերպության աշխատանքների մեջ։ Արդյոք այդ մողա՞յ յե, կամ ինչվոր ժամանակավոր անհրաժեշտություն, կամ վորեւե մի այլ բան։ Ինքնազործությունը պիոներական շարժման մեջ վճռական մոմենտ ե, մեր աշխատանքի հիմնական սկզբունքներից մեկը։ Մատադ սերնդի կոմունիստական դաստիարակությունն անհնար և առանց յերեխաների կանկրետ գործնական մասնակցությանը ացիալիստական շինարարության-բանվոր դասակարգի հեղափոխա-

կան պայքարին։ Յեկ մենք, ղեկավարներս, պետք ե յերեխանների առաջ այնպես դնենք բանվոր գասակարդի խնդիրները և նպատակները, տանք նրանց այնպիսի կոնկրետ բովանդակություն և այնպիսի ձևեր, վոր այդ խնդիրներն և նպատակները մոտիկ լինեն յերեխային, խանդավառեն և վողեորեն նրան մասնակցելու այդ խնդիրների իրագործման համար մղած պայքարին։

Յեք ե այդպես չինի, յեք ե յերեխան չըմբռնի նրան շրջապատող սոցիալական միջավայրի առանձնահատկությունները, նրան շրջապատող կյանքը, - չի կարող լինել ինքնագործություն, ուրեմն և չի կարող գոյություն ունենալ պիոներական կազմակերպություն քանի վոր ինքնագործությունը և նախաձեռնությունը, պիոներական աշխատանքների մեջ, հիմնական ու կարևոր մոմենտներ են և, վորն անմենապլիսավորն ե նրանց հիման վրա յեն կառուցված պիոներ աշխատանքները։

Կարե՞լի յե արդյոք հանդուրժել, յերբ յերեխան գալիս ե մեզ մոտ, մտնում ե մեր ջոկատը, ապրում և աշխատում ե այնտեղ միմիայն արտաքին նշանների համար, միայն այն բանի համար, վոր նա սիրում և հարգում ե կոլվարին և այլն։ Նման դրություն չի կարելի հանդուրժել։ Վորովհետեւ դրանով յերեխան միայն կարող ե ժամանակավորապես տարվել և վողեվորվել։ Յերեխան ուզում և դորժել, նա-մեր խորհրդային յերեխան, պա-

տանին-ուզում ե գործել վորոշ ուղղությամբ, վորը թելադրում ե նրան շրջապատող խորհրդային միջավայրը, թելադրում ե նրան սոցիալիստական շինարարության ամբողջ ընթացքը:

Սակայն յերեխաները կարիք ունեն կաղմակերպության: Անհրաժեշտ ե ոգնել նրանց, ձևակերպել նրանց անորոշ, տարտամ և անկայուն ձգոտումները, լուծել նրանց շրջապատող հասարակական կյանքի սուր հակառակյունների հանդույցը: Պետք ե ոգնել նրանց, վորպեսզի նրանք կարողանան հասկանալ և ըմբռնել իրենց վրա ներգործող վնասակար ազդեցությունների եյությունը և սովորեցնել նրանց կովել այդ վնասակար ազդեցությունների դեմ:

Մենք պետք ե դասակարգայնորեն սրենք յերեխայի աչքը և ականջը, սովորեցնենք նրան տեսնել և լսել կյանքը, վոգեսորենք նրան բանվոր դասակարգի խնդիրների վիթխարիւթյամբ:

Բայց այս ամենը հնարավոր ե միայն այն ժամանակ, յերբ մենք յերեխաներին հնարավորություն ենք տալիս դառնալ շրջապատող հասարակական կյանքի մասնակիցներ, ստեղծագործողներ, յերբ մենք սպնում ենք նրանց զործնականում, կյանքի վորքով քննել և համանալ նրանց շրջապատող միջավայրի եյունյունը, բանվոր դասակարգի նպատակների և խնդիրների իրազործման ուղիները, ինչպես և

բանվոր դասակարգի յերբուրդ սերնդի դերը
ոյդ խնդիրների իրազործման ասպարիզում:

Դիսներական շարժումը հենց այս բոլոր
խնդիրներում պետք է ողնի մեր յերկրի մա-
տադ սերնդին: Մեր ամ բողջ սիստեմը հենց
գնում է այս ուղղությամբ: Դժվար չե յու-
րացնել հասարակական-ողտակար աշխատան-
քի մեխանիկական դրումը ջոկատում, այսին-
քըն այնպիսի դրություն, յերբ կոլվարը յերե-
խային տալիս է վորոշ առաջադրանքներ և ա-
ռում է.—«Սա հասարակական-ողտակար աշ-
խատանք է և դու պարտավոր ես զբաղվել դը-
րանով, վորովհետեւ դու ալիսներ ես»,—այս-
պիսի դրություն վոչ մի վողեվորություն չի
առաջնում յերեխայի մեջ, չի խանդավա-
ռում նրան, վորովհետեւ վերից տրված այդ-
առաջադրանքի իմաստը չի ըմբռնվում, չի
յուրացվում յերեխայի կողմից:

Միանդամայն պարզ է, վոր հենց նման
մեխանիկական մոտեցումը հաճախ ստեղծում
է այնպիսի դրություն, յերբ յերկիրը լարված
ուժերով զբաղված է մի գործով, իսկ ալիսներ
ջոկատը մի այլ գործով, թեև նույնպես «հա-
սարակական-ողտակար»: Միայն այն ժամա-
նակ ջոկատը համընթաց կվնա կյանքի հետ,
չի կատարի «առհասարակ»՝ հասարակական-
ողտակար աշխատանք, յերբ կոլվարը ջոկա-
տին հեռու չի պահում կյանքից, չի կտրում ա-
ռորյա աշխատանքից, այլ դեկավարում է նը-
րան կյանքի հետ իր ունեցած ծանոթության
միջոցով:

Ահա այսպես ե դրված ինքնագործության
հարցը: Ահա թե ինչու յուրաքանչյուր վոք
պետք ե պարզութեն ըմբռնի, վոր ինքնագոր-
ծությունը մեր պիոներական կազմակերպու-
թյան մեջ հնարավի ինչ վոր բան չե, վորով-
հետեւ նա հանդիսանում ե այն հիմքը, վորի
վրա բարձրանում ե մեր ամբողջ աշխատան-
քը, մեր մեթոդիկան, մեր սիստեմը:

ԹԵՌՈՒԱՅՆ ՅԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ.

Բայց այս թեորիան ե: Պրակտիկայից
մենք գիտենք, վոր գործը գզալի չափով այլ
կերպ ե դրված: Մեր սկզբունքներից շատերը
խեղաթյուրվում են: Մեր բոլոր ցավերի ար-
մատը գտնվում ե այն բանում, վոր մենք մին-
չե այժմ չենք կարողանում լուծել հիմնական
խնդիր—ինքնագործության հարցը այնպես,
ինչպես նշեցինք վերևում:

Ինչո՞ւ մենք չենք կարողանում լուծել այդ
խնդիրը: Նշենք միայն յերկու վճռական մո-
մենտ: Առաջինը—դա զեկավար կաղըերի,
մասնավորապես կոլվարների կաղըերի խըն-
դիրն ե: Դեկավար կաղըերի ներկա կազմը,
կոլվարների կազմը իր զգալի մասով այնքան
հետ ե մնում իր առաջ դրված պահանջներից,
այնքան թույլ ե պատրաստված իրագործելու
իր դերը պիոներ կոլեկտիվում, վոր նա բնա-
կանարար չի կարողանում իրագործել ինքնա-
գործության ծավալման խնդիրը: Սա մեկն ե
ամենակարեվոր, վճռական պատճառներից,

բայց այդ բոլորը չեն: Յերկրորդ պատճառն
այն է, վոր մենք—թե կոլվաքներս և թե պա-
տանեկական կազմակերպության բյուրոների
աշխատաղներս, բավարար չափով գիտակցա-
կոն կամք չունենք ծավալելու մանուկների
ինքնապործությունը, բավականաչափ սլար-
զորեն չենք ըմբռնում, թե ի՞նչ բանի յեն ըն-
դունակ յերեխաները: Յեզ պետք եւ ասել, վոր
Մոսկվայում կայացած պիոներական հավաքի
ժամանակ վոչ միայն կուսակցականները,
բանվորները, վորոնք անմիջականորեն կապ-
ված չեն պիոներ շարժման հետ, այլ և շատ
ովիոներ—աշխատաղներ ախ ու վախ եյին քա-
շում, տրանջում եյին, թե մենք բոլորովին
չենք ճանաչում մեր յերեխաներին, չենք ճա-
նաչում պիոներական շարժումը, իհարկե,
խոսքը այստեղ վերաբերում եւ վոչ թե բացա-
ռությունների, այլ ասկում եւ ընդհանուր
առմամք:

Ի՞նչ պետք եւ անի և ի՞նչ չպետք եւ անի
կոլվարը, վորպեսզի խուսափի ինքնապործու-
թյան ճնշման պայմաններ ստեղծելուց: Առա-
ջինը—չպետք եւ ուղղությունը բռնի դեպի «ա-
ռաջադրանքները», այլ ոգնի յերեխաներին
ժանոթանալ կյանքին, իրենց դործարանին,
ձեռնարկության, կոլտնտեսության, կարիք-
ներին և հաջողություններին, ավելի հաճա-
խակի և ավելի լավ ծանոթացնի յերեխաներին
կուսակցության և կոմյերիտմիության կարե-
ժորագույն խնդիրներին ներկա ետապում:

Վորքան ավելի պիոներներն իրազեկ լինեն ի-
րենց ձեռնարկության, շրջանի հասարակա-
կան, արտադրական կյանքին, վորքան ավելի
պարզ լինեն նրանց համար մեր յերկրի հեր-
թական խնդիրները, այնքան ավելի վոգեվո-
րությամբ ողակներն և ջոկատները կմատնակ-
ցեն հասարակական աշխատանքի այն ճակա-
տամասերին և ճյուղերին, վորոնց մեջ յեր-
կիրը զգում ե առանձնապես սուր պահանջ:
Այն ժամանակ կարիք չի լինի, վորպեսզի կոլ-
վարը ինչ վոր «առաջադրանքներ» տա յերե-
խաներին, դայտելի նման մաննի կաշայով կե-
րակրի նրանց: Մեղանում այլևս չի լինի այն
դրությունը, յերբ առանց կոլվարի ցուց-
մունքներին յերեխաները մնում են անողնա-
կան, անգործ, և չեն զգում այն վոգեվորու-
թյունը, այն հերոսական աշխատանքը, վոր
բուռն թափով կատարվում ե մեր յերկրում:
Սակայն կոլվարը յերբեք չի կարող իրագոր-
ծել այդ խնդիրը, յեթե նա իր ամբողջ հույսը
դնի ինչ վոր պատրաստի դեղատոմուների վրա,
վոր նա ստանում ե պատանի պիոներների բյու-
րոյից, յեթե նա նստի և սպասի շրջարերա-
կաններին, առաջադրանքներին և միայն կետ
առ կետ հետեւի նրանց:

ՊԱՅՔԱՐ ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Յերկրորդ—մեր անցման շրջանի սուր հա-
կասություններին զուգընթաց նկատվում են
մի շարք այլանդակ, հակասական յերեւյթ-

ներ յերեխաներին շրջապատող միջավայրում
(կենցաղում և այլն) յերեսութներ, վորոնք
յերեխաների գիտակցության մեջ առաջացը-
նում են բազմաթիվ կասկածներ, տարակու-
սանքներ, հրատապ, հուզիչ հարցեր։ Դժբախ-
տաբար յերեխաները շատ հազվադեպ են դի-
մում կոլվարներին և ավելի հազվադեպ իրենց
ողակին՝ այդ հարցերի բացատրությունը ըս-
տանալու համար։ Դրա պատճառն այն է, վոր
կոլվարները հաճախ չեն աշխատում տեսնել,
թե ինչ հարցեր են հուզում յերեխաներին,
հոգ չեն տանում կազմակերպելու ընկերական
զրույցներ պիտներների հետ։ Նրանց հուզող
հարցերի մասին, չեն կարողանում յերեխանե-
րին անհաշտելի թվացող հակասությունները
լուսաբանել մեր պիտակոր գծի հիման վրա,
պարզել այդ հակասությունների արմատները։

Փոխանակ յերեխաների նկատած՝ մեր կեն-
ցաղի այլանդակությունների, մեր արտա-
դրության, ուսման, կուլտուրայի աղաղակող
բացերի (մանկական վնասակար գրքերը, կի-
նո նկարները, խաղալիքները և այլն) պատ-
ճառները բացատրելու միջոցով վոգեվորելու
յերեխաներին համառ պայքարի ձգտումով
այդ բոլոր այլանդակությունների և բացերի
դեմ, կոլվարները կամ չեն նկատում այդ ա-
մենը, կամ թե բավականանում են միայն մի-
տինգային ճառերով, վորոնք սառեցնում են
յերեխաների ցանկությունը ջոկատում զրազ-
վելու այդ ցավոտ հարցերի, կասկածների
քննությամբ և լուսաբանությամբ։

Կոլվարներից շատերն ընդհանրապես պատրաստված չեն, յերեխաների հետ միասին քըննելու նրանց հուզող հարցերը և փոխանակ այդ պործին մասնակից դարձնելու պատրաստվածքներների, «ամաչելով» յերեխաներից, անտեղի վախենալով կորցնել իրենց հեղինակությունը յերեխաների աչքում, վոչ վոքի ոգնության չեն կանչում, իսկ իրենք ել չեն աշխատում թափանցել հարցի եյության մեջ, վախեցնում են յերեխաներին, կամ ընդհանրապես փակում են «անհաճո» խոսակցությունները։ Մի՞թե կարող ե այս հողի վրա տճել ինքնագործությունը, մի՞թե կարող ե նըման պրակտիկա առաջացնել և բարձրացնել պիոներների ակտիվությունը, նրանց քաղաքական մարտունակությունը, գիտակցության աճումը և հասարակական-ուղարկար գործունեյության թափը։

Յերրորդ—պիոներական մորալի (բարոյականության) հարցերը շատ են զբաղեցնում յերեխաներին, բայց և շատ անորոշ են նրանց համար։ Պիոներների (և բոլոր յերեխաների) փոխհարաբերություններում կան շատ այլանդակություններ, վոր ստացել են նրանք ավագ սերնդներից։ Պիոներների հետ լրջորեն քննելով մի շարք հարցեր այդ ընապավառից (ընկերականությունը տղաների և աղջիկների միջև, զանազան ազգությունների պատկանող պիոներների միջև, վերաբերմունքը դեպի մեղխորթ դասակարգերի յերեխաները, վերաբեր-

մունքը դեպի «մեծերը», դեպի մոտիկ ընկերների, աղջականների այս արարքները, վորոնք վնասում են բանվոր դասակարգի գործին և այլն), Արջորեն քննելով այս հարցերը, կապակցելով կոնկրետ փաստերի և հանդամանքների հետ, մենք սկսութեան դաստիարակենք յերեխաններին և կրկին վորչելորենք նրանց գործելու, իրենց սեփական շարքերում նկատված հարաբերությունների, այլանդակությունների դեմ կազմակերպված պայքար մղելու ձըդումով:

Իսկ իրականում ինչպէ՞ս և դրությունը առհասարակ: Կամ կորիարները աչքից բաց են թողնում այս ամենը, կամ բավականում են գաղաքի խօսաներ, կարդալով, թե «դա պիտի իրին վայել չե»—«չե՞ս ամաչում, և դեռ պիտի իր ես» և այլն: Իսկ թե ինչո՞ւ «այդ պիտի իրին վայել չե», ինչու այդ «ամոթ» և այլն, պիտի իրի համար մնում և անհասկանալի:

Հաճախ կոլլարը կոպիտ կերպով բղավում է և սպառնում. «Դրա համար քեզ կոլլեկտիվից կհեռացնենք, քո հարցը կդնենք խորհրդում», — և դնում են, և դուրս են հանում, խորհուրդն ել անվերջ հանդիմանություններ և ուղղում, իսկ թե ինչո՞ւ «դրա համար» այդպիսի պատիժներ են սահմանվում, շատ անդամ պարզ չե պիտի իրների համար: Սայդը նույնպես արգելք և հանդիսանում պիտի իրների ինքնագործությանը, վըրդվեւուն:

խանգարում ե յերեխաների գիտակցության, նրանց ակտիվության զարգացմանը, պիոներական աշխատանքի ամենակարեվոր բնագավառոներից մեկում, այն բնագավառում, վորը վորոշ նախապայմաններ ե ստեղծում պիոներական կոլեկտիվի ամրության համար, դեպի մարդիկ գասակարգային ճիշտ վերաբերմունք ունենալու համար:

ՍՐՎԱՐԵԼ ՆԱՅԵՎ ՍԽԱԼՆԵՐԻ ՎՐԱ

Չորրորդ—յեթե հնարավորություն չաըրպի յերեխաներին, սովորել նաև իրենց սեփական փորձով, այն ժամանակ պիոներական շարժումը անելիք չի ունենա: Պիոներական կազմակերպությունը կյանքի կոմունիստական դարրաց և միջինմասնոր յերեխաների համար: Ծեթե այդպես և, ուրեմն թույլ տվեք յերեխաներին իրենց սեփական փորձով սովորել, թույլ տվեք նրանց սխալվել, վորպեսզի նրանք սովորեն այդ սխուլներից և սխաներ չդորժեն*):

Իսկ ի՞նչ ե այս դործում կոլվարի դերը: Նա պետք է ամեն կերպ յերեխաներին մղի դեպի գործնական աշխատանքը, ամենահամընթարատար վերաբերմունք ցույց տա յերեխաների

*) Պարզ ե, վոր մենք նպատակ չունենք խաղալ սխաների հետ, մենք ուղում ենք շեշտել միայն դորժնական փորձի կարևորությունը:

սխալներին և այլն, վորովհետեւ նրա խնդիրն
ե ողնել յերեխաներին, ողնել նրանց աճմանը
և զարգացմանը։ Հարցը դնենք ուղիղ։ իրա-
կանում ինչպե՞ս և մեզ մոտ, ինչպե՞ս են վար-
վում մեղանում կոլվարների մեծամասնու-
թյունը։ Շատ անթույլատրելի կերպով։ Նը-
րանց մեծամասնությունը յերեխաներից ա-
ռաջ ե վաղում, նրանց փոխարեն ե աշխա-
տում, փոխանակ նրանց ղեկավարելու, փո-
խանակ ամեն կերպ ողնելու նրանց հանդիպող
խոչնդուները, դժվարությունները հաղթա-
հարելու համար։ Այս ամենը այնքան հանրա-
ծանոթ յերեւույթներ են պիոներ-կազմակեր-
պության կյանքում, վոր կարիք չկա ավե-
լորդ անդամ կանդ առնել նրանց քննության
վրա։

Այսպես ե, դժբախտաբար մեր կոլվարների
մեծամասնությունը պիոներական ինքնաշոր-
ծության հարցում։ Նրանցից յուրաքանչյուրը
պարտավոր ե, վորքան ել նրան այդ հանելի
չթվա, կրկին և կրկին անգամ նայել իր «հա-
յելու»—այսինքն իր ղեկավարած ջոկատի
մեջ, վորպեսզի լավ տեսնի իր կոլվարական
ղեմքի թերությունները և իրոք բայլչեմիկո-
րեն ճանաչի և խոստովանի այդ թերություն-
ները, վորպեսզի յերեխաների հետ միասին
վճռական կերպով վերացնի այդ թերություն-
ները։

ԱՌԱՆՑ ԿՈԼՎԱՐԻ ԶԻ ԿԱՐԵԼԻ ԱՇԽԱՏԵԼ

Նկատի ունենալով այն ամենը, ինչ մենք


դիտենք մեր կոլվարի մասին, նկատի ունենալով այն դժվարությունները, վորոնց հետ կապված՝ և ողիոներաշխատանքի ասպարեզում ողտակար, լավ կոլվարների կաղըրեր ներգրավելու հարցը, մի քանի ընկերների գըլիում ծագում և հետևյալ «պաղափարը»—ից ըստ հարկավոր նեղ կոլվարները, թե վոչ: Յեթե կոլվարը ճնշում և յերեխանների ինքնադրծությունը, յեթե այնքան դժվար և մեղ համար պետքական կոլվարներ ճարելը, յեթե մանուվանդ իրենց, յերեխանների շարքերում գոյություն ունի ստեղծադործական ուժերի հսկայական պաշար, յեթե մենք զործնական կյանքում տեսնում ենք, վոր պիոներական ակտիվը հաճախ հիանալի կերպով իրադործում և բազմաթիվ կոնկրետ աշխատանքներ, ապա գուցե հնարավոր և և արժե տռհասարակ դնել այն հարցը, թե ջոկատում կոլվարի կարիք կա՞, թե վոչ. արդյուք չի՞ կարելի դոնել մի վորեւ նոր ձև, վորով կոմյերիամիությունը դեկավարի պիոներական շարժումը առանց կոլվար-խնամակալիք, առանց այդ վատ խրատառույին, ինչպիսիք են այժմ վա կոլվարներից շատ շատերը:

Այս տրամադրություններն անպայման վնասակար են: Նրանք խփում են վոչ այնուեղ, վորտեղ հարկավոր են: Մենք դիտենք, թե յերեխանները վո՞րպիսի համականք են դդում դեպի դեկավարը, վորպի՞սի կարիք ունեն ավագ, ավելի վորձված ընկերոջ խորհրդին:

Զի յեղել մի որինակ, վոր ջոկատի յերեխաները, նույնիսկ այն զեպքում, յերբ յեղել են մեծ թվով վատ կոլվարներ, հարց դրած լինեն այն մասին, թե առհասարակ կոլվար հարկավոր չե: Մենք դիտենք այլ կարգի որինակներ, յերբ յերեխանները սկսում են ըմբոստանալ կոմյերիտական բջիջի զեմ, վոչ թե նրա համար, վոր չեն ցանկանում կոլվար ունենալ, այլ նրա համար, վոր կոմյերիտական բջիջը չի տալիս այնպիսի կոլվարներ, վոր հարկավոր են պիոներներին: Այդ բնական ե: Յերեխաններն ընդունակ են բարձր աստիճանի վրա դնել իրենց ակտիվությունը յերկար ժամանակով, յերբ նրանք ունեն մշտական զեկավարություն, յերբ նրանք զգում են հուսալի հենարան, մշտական ոժանդակություն, վորպեսզի վստահ լինեն իրենց սեփական ուժերի վրա: Դրա համար միանդամայն սխալ ե յերեխանների ինքնազործության պրոբլեմի կապակցությամբ դնել այն հարցը, թե կոլվարները ընդհանրապես հարկավոր են, թե վոչ:

ԻՆՔՆԱԳՆԱԴԱՏԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԱՄԵՆԱ- ՈՒԺԵԼ ԶԵՆՔՆ Ե

Ինքնազործության հարցի հետ կապված ենան ինքնազնադատության հարցը պիոներ կազմակերպության մեջ: Ինքնազնադատությունը յերեխանների ինքնազործության ծածալման ամենաուժեղ զենքերից մեկն ե: Դրժվար ե սպատկերացնել ինքնազործ մի ջոկատ,



վորտեղ տիրում և լոռության սիստեմը, վորտեղ յերեխաները վախենում են խոսել իրարթերությունների մասին, ջոկատի, կոլվարի աշխատանքի թերությունները քննադատելիս ոժանդակություն չեն զգում զեկավարության կողմից։ Աշխատանքի նոր սիստեմը, ինքնագործության կուրսը պահանջում է, վորապես դի յերեխաները իրոք իրենց զգան կազմակերպության տերերը, որտաշավ վերաբերմունք ցույց տան իրենց կազմակերպության կարիքներին, վճռական պայքար մղեն նրա թերությունների դեմ։

Յեթե այդ չկա, ուրեմն չկա նաև նոր սիստեմի կարեվորագույն մասը, ուրեմն չկա պիոներական ինքնաշործության աճման դըլխավոր պայմաններից մեկը։ Սակայն բավական չե յերեխաներին «ինքնաքննադատության իրավունք տալլ»։ պետք է տալ նաև հրեարավորություն դրս համար, պետք է աշխատել առեղծելու այդ հեարավորությունները, վարպեսզի յերեխաները իրոք ուզենան կարողանան բննադատել։

Պիոներական աշխատանքներում յեղած թերությունները վերացնելու համար, պետք է լայն կերպով ծավալել ինքնաքննադատությունը, այնպես, որ բայց կեկլյան առողջ ինքնաքննադատությունը դառնա աշխատանքի իսկական և լավադույն մեթոդ։

2. ՊԻՌՆԵՐ ԱԿՏԻՎԻ ՀԵՏ ԿԱՏԱՐՎԱԾ
ԱՇԽԱՑԱՆՑԻ ԴՐՈՒՅԹՈՒՆԸ

Ակտիվ և պասսիվ

Ինքնագործության ծավալման ասպարեզում պիոներական ակտիվը խաղում է վճռական դեր: Եթեր մենք դնում ենք պիոներական ակտիվի, նրա հետ աշխատանք տանելու հարցը, յերբեք նկատի չունենք, վոր պիոներների մնացած ամրող մասսան պասսիվ և: Մենք նկատի ունենք մի այլ բան, վոր պիոներական մասսան համասեռ (միանման) չե, թե՛ ըստ տարիքի և թե՛ յուրաքանչյուր տվյալ տարիքի սահմաններում: Մենք չենք կարող այժմ մանրամասն թվել բոլոր այն պայմանները, վորոնք ստեղծում են այդ տարրերությունները, սակայն մեղնից յուրաքանչյուրը կարող է արձանագրել այն փաստը, վոր պիոներական կոլլեկտիվի ներսում մենք ունենք ավելի ընդունակ, ավելի դրագեատ, ավելի ակտիվ, ավելի յեռանդ ցույց ավող, ավելի ժիր յերեխաներ, քան մնացած մասսան և այն: Մենք ունենք նաև այնպիսի դրություն, յերբ պիոներական կոլլեկտիվի ներսում կան 10-16 տարեկան յերեխաներ, պատահնիներ, վորոնք, իհարկե խիստ զանազան լիւմ են իրարից իրենց զարդացումով, աշխատանքի ինքնագործ կազմակերպման համար պատրաստված լինելու տեսակետից: Այս հանգամանքը չի կարելի նկատի չունենալ, յերբ մենք վործնականում իրա-

կանացնում ենք յերեխաների ինքնագործության կուրսը։ Մեզ համար միանդամայն պարզ ե, վոր մեծահասակները փոքրահասակներից տվելի ընդունակ են զարգացնելու գիտակից, ստեղծագործական ինքնագործություն, վորովհետեւ այդ բղխում և այն բանից, թե յերեխաները վոր չափով են ըմբռնել շրջապատող կյանքի իմաստը։

Մենք տեսնում ենք, վոր յերեխաները կարիք ունեն զեկավարների։ Դժվար չեն ստուգել այդ։ Բակում, փողոցում և այլն դուք միշտ յերեխաների մի վորեւե խմբի մեջ կտեսնեք մի զեկավարի, վորին վոչ վոք չի նշանակել, այլ իրենք յերեխաներն են առաջ քաշել։ Չեկավարների այդ կարիքը զգացվում և նույն մեր պիոներ կաղմակերպության մեջ։ Պիոներ կոլեկտիվում զեկավարները պարագիտական կատեգորիայի յերեխաներ չեն, վորոնք մեր ոգնությամբ զարգացնում են իրենց ակտիվությունը պիոներների ամրող մասսայի հաշվին։

Ճիշտ հակառակը. Չոկելով յերեխաների ակտիվ, հատուկ աշխատանք տանելով նրանետ, մենք այդ անում ենք նրա համար, վորոպեսզի այդ ճանապարհով ել ավելի լավ ծավալնեք յերեխաների ամրող մասսայի ակտիվությունը, և այդ հաջողվում է մեզ։

Յերեխաների ակտիվը միաժամանակ հանգիստնում ե պիոներական ինքնագործության արդյունքը և առաջ շարժող ուժը։ Յերեխանե-

րի շարքերում չկա մանկական պատրաստի ակտիվ։ Նա ծնվում է ամբողջ կոլեկտիվի ակտիվ աշխատանքի հիման վրա։ Բայց ծնվելուց հետո նա դառնում է յերեխաների ամբողջ կոլեկտիվի ակտիվության հետագա բարձրացման անհրաժեշտ զենքը, անհրաժեշտ միջոցը, վորը բարձրացնում և նրա ինքնագործությունը և դնում է ավելի բարձր աստիճանի վրա։

Պիոներ-կազմակերպության սիստեմը, կառուցվածքը յեխնում և պիոներական ակտիվի առկայությունից։ Կոլեկտիվի գլխին գըտնվում է կոլեկտիվի խորհուրդը, այսինքն նըրա կոլեկտիվ ղեկավարը, ջոկատի խորհրդի ներսում—կոլվարը։ Ողակի գլխին—ողակի ղեկավարը, յուրաքանչյուր խմբակի, բրիդագի, հանձնաժողովի գլխին—«պետը», ավագը (староста) նախագահը, այսինքն ղեկավակներ, ակտիվ պիոներներ, վորոնց առաջադրում են իրենք՝ յերեխաները։ Մեր կառուցվածքը այսպիսով հնարավորություն է տալիս յերեխաներին բավարարելու կազմակերպիչներ—ղեկավարներ առաջ քաշելու բնական պահանջը, վորովհետեւ դա հսկայական դեր է խաղում նրանց ինքնագործության մեջ։

Բայց միանդամայն պարզ է, վոր սիստեմի և պրակտիկայի միջև ներկայումս գոյությունն ունի բավական մեծ անդունդ։ Մենք ունենք և՛ կոլեկտիվի խորհրդ, և՛ կոլեկտիվի խորհրդի նախագահ և այլն։ Սակայն վոչ միշտ դրանք ստեղծադրծող դեմքեր են։ Վոչ միշտ

յերեխաների կողմից ընտրվածները խաղում
են իրենց խսկական դերը, վոչ միշտ այդ այն
ե, վորը հարկավոր ե յերեխաների ակտիվ
ինքնագործության համար:

Մեր կոլվարների մեծամասնության վո-
րակն այնպես ե, վոր չի նպաստում յերեխա-
ների ինքնագործության ծավալման խնդիր-
ների իրադորժմանը, դրանից ել բղխում ե մեր
սիստեմի և գործնականաշխատանքի միջև յե-
ղած տարբերությունը:

ՄԵՐ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Իսկ ի՞նչ ե մեր պրակտիկան յերեխաների
ակտիվի հետ կատարված աշխատանքի ասպա-
րեում՝ կոլեկտիվների և բազաների մեծ մա-
սում։ Մենք կխոսենք այդ պրակտիկայի թե՛
բացասական և թե՛ դրական կողմերի մասին։
Դժբախտաբար բացասական կողմերը ավելի
շատ են, քան դրական կողմերը։

Կոլվարների մեծամասնությունը չի հան-
դիսանում այն ողակը, վորը պետք ե միացնի
պիոներների բյուրոն, կոմյերիտական բջիջը
և կոլեկտիվը, չի մոտեցնում պիոներների
բյուրոն և կոմյերիտական բջիջը կոլեկտիվին,
այլ ընդհակառակը հաճախ դառնում ե պատ-
նեշ նրանց միջև, դառնում ե կոլեկտիվի աշ-
խատանքների ծուռ հայելին, վորը անձիշտ
կերպով ե արտացոլում նրա դրությունը։

ԶԱՇԽԱԾԵԼ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ, ԱՅԻ
ՍՈՎՈՐԵՑՆԵԼ ՆՐԱՆՑ ԱՇԽԱՏԵԼ

Ողակը կոլեկտիվում հանդիսանում ե հիմ-
նական աշխատանքային բջիջը։ Միանդամայն
բնական ե այստեղից յենթադրել, վոր ողակա-
վարը պետք ե նրանում խաղա ողակի ակտի-
վությունը կազմակերպողի դեր, իսկ կոլվարը
ովետք և կարողանա ողնել ողակի զեկավար-
ներին կատարելու այն յերեխաների կազմա-
կերպչի պարտականությունը, վորոնց զեկա-
վարությունը հանձնված ե նրանց։ Բայց իրա-
կանում ինչպես և կատարվում այդ ողնու-
թյունը։ Փոխանակ համբերատար կերպով սո-
վորեցնելու ողակավարին ուշխատել, համբե-
րատար կերպով ցույց տալու նրան սխաները,
ողնելով նրան ողակի հետ միասին ուղղել այդ
սխաները, կոլվարը անմիջական կերպով գը-
նում ե ողակը և այնտեղ ամեն ինչ կարգա-
դրում ե ողակավարի փոխարեն, իսկ լավա-
գույն դեպքում նա վոչ մի կերպ չի ողնում ո-
ղակավարին։ Հասկանալի յե, վոր սա խեղ-
դում ե ողակավարի ակտիվությունը և նրա
հետ միասին ամբողջ ողակի ակտիվությունը։

Կոլեկտիվի խորհուրդը, ողակավարը և
այլն—շարժիչ լծակների, ինքնակործությունը
զարգացնող ուժերի այս ամբողջ սխատեմը դառ
նում ե անկենդան մի սխեմա։ Սովորական զե-
կավարը ջոկատին մոտենում ե վոչ թե վոր-
պես մանկավարժի, վոչ վորպես յերեխաների

ակտիվությունը կազմակերպողի, այլ վորապես
մի չինովնիկի, վորը աշխատում ե վորքան
կարելի յե շուտով աղատվել իրեն հանձնա-
բարված աշխատանքից :

Ի՞նչ ե նշանակում լինել դեկավար ջոկա-
տում, ի՞նչ ե նշանակում համբերատար կեր-
պով վերաբերվել յերեխաների սխալներին :
Յենթադրենք թե դեկավարը գտնվում ե կո-
լեկտիվի խորհուրդում : Յերեխաների համար
շատ դժվար ե լուծել իրենց առաջ դրված հար-
ցը : Նեկավարի պարտականությունն այն չե,
վոր նա անձամբ լուծի այդ հարցը, վորպես-
զի «արագացնի» աշխատանքը : Վոչ : Նա պետք
ե գործի քննության պրոցեսում սովորեցնի
յերեխաներին մտածել հարցերի վրա, քննել և
լուծել այդ հարցերը : Իսկ մեր կոլյարներն ի-
րենք են լուծում հարցերը յերեխաների փո-
խարեն, առաջ են վազում, աշխատում են վոր-
քան կարելի յե շուտ լուծել հարցերը, վոր-
պեսզի ջոկատում աշխատանքը վորքան կարե-
լի յե արագ կատարվի, մոռանալով, վոր եյա-
կանը հարցի արագ լուծումը չե : Անհրաժեշտ
է հարցը լուծել և աշխատանքը կատարել այն-
պես, վոր յերեխաները անձամբ կատարելով
այդ աշխատանքը, դաստիարակվեն և զարգա-
նան :

Նեկավարը չի հասկանում, վոր ջոկատի
աշխատանքը ինքնանալատակ չե, նույնիսկ բա-
վական չե զուտ գործնական ոգնություն ցույց
տալ սոցիալիստական շինարարությանը : Այս-
24

տեղ և հենց զեկավարի դժբախտությունը :
Կուսակցության վոչ մի անդամը չի ասի որինակ, վոր պիռներների մասնակցությունը հացամթերումներին ունի միայն այն նողատակը, վոր յերեխաները, վորքան կարելի յե շատ հաց հավաքնեն : Խնդիրն ավելի բարդ է : Դա կայանում է նրանում, վոր յերեխաները մասնակցելով հացամթերումներին, սովորեն տեսնել գասակարդացին թշնամուն, սովորեն կըովել նրա կեմ : Պիռներները պետք է գործնական ոգնություն ցույց տան կուսակցությանը, վորպեսզի պատրաստվեն այն մեծ աշխատանքին, վոր սպասում է նրանց, վորպես սոցիալիզմ կառուցողների, յերբ նրանք չտվահաս կդառնան :

Մեր կոլվարների դլխավոր պակասություններից մեկն այն է, վոր նրանք չեն կարողանում իրենց աշխատանքը յենթարկել այս խնդիրներին :

ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐ

Գործնականում յերեխաների ակտիվը պարզապես դառնում է դեկավարի կցորդը : Նեկավարները չեն կարողանում սովորեցնել յերեխաներին ինքնուրույն աշխատանք կատարել, չեն վարժեցնում նրանց դործնական աշխատանքի մեջ : Լավագույն դեմքում ողակավարները բարեխղճորեն, մեխանիկորեն կատարում են կոլվարների առաջադրանքները : Խսկ կոլեկտիվի խորհուրդը հաճախ հանդիսա-

նում և սղարգապես նիստեր դումարող մի մեռքենա։ Յեթի ջոկատի խորհուրդը կոլվարի ղեկավարությամբ չսովորի քննել ակտիվի կողմից առաջադրված հարցերը, ապա հասկունալի յե, վոր ամբողջ աշխատանքը վերածվում է դաստարի նիստերի, վորովհետեւ ինըիրն այն չե, վոր պետք ե միայն քննել որակարդի հարցերը, կարևորն այն ե, վոր այդ որակարդի քննությամբ յերեխանները հասկանան, թե ինչ և ինչպես պետք ե անի ջոկատը և ի՞նչ և խորհրդի, ակտիվի դերը։

Գործնականում ի՞նչ և հետեւում սրանից Ա՛յն; վոր առաջին, ողակավարների ընտրություններին ցույց ե տրվում շատ անլուրջ վերաբերմունք, վոչ միայն մեղանում, այլ և իրենց՝ պիոններների կողմից։ Յերբ պիոններները տեսնում են, վոր ողակավարի դերը թուլանում ե, վոր ողակավարի վրա մեծերը հույս չունեն, իրենց ել դադարում են նրա վրա հույս զնելուց։ Ել ինչո՞ւ զարմանալ, յերբ հաճախ հենց լավագույն պիոններները հրաժարվում են աշխատել, վորպես ողակավարներ։

Յերկրարդ, մեղանում յերեխանները նույնպես անլուրջ վերաբերմունք են ցույց տալիս ջոկատի խորհրդի աշխատանքներին։ Խորհուրդը հեղինակություն չունի։ Ջոկատի խորհրդի կայացրած հանդիմանությունը շատ հաճախ վոչ մի ազդեցություն չի գործում։ Յերեխանները չեն սովորել պրակտիկան, այդ չի սովորեցնում նրանց—ջոկատի խորհուրդի վրա

նայել, վորապես իրենց կոլեկտիվ ղեկավարի մրա, նրանք չեն տեսնում, վոր ջոկատի խորհուրդը իրոք ղեկավարում և իրենց աշխատանքը և հոդ և տանում իրենց ժամին:

Յերրորդ, վերոհիշյալ տիպի սիստեմով մենք սպանում ենք յերեխաների հավատքը, ղետի իրենց սեփական ուժերն և ընդունակությունները: Մենք պետք եւ դաստիարակենք այնպիսի յերեխաների, վորոնք ընդունակ են հանդիպնել, համարձակ և վճռական կերպով գնալ ղետի վորոշ նպատակ, համարձակ և վճռական կերպով պայքարել դրված նպատակի իրագործման համար: Միանդամայն պարզ ե, վոր մեր աշխատանքի սիստեմի աղավաղումը մեծ չափով արգելք և հանդիսանում նման դաստիարակության:

Չորրորդ, կոլվարը չի սովորեցնում յերեխաներին հաղթահարել խոչընդուները, այլ ինքը նրանց փոխարեն հաղթահարում և այդ խոչընդուները, թուլացնում եւ պիտներական կոլեկտիվի հեղինակությունը իրենց պիտներների և շրջապատի յերեխաների աչքում: Զոհատից չի ստացվում այն տպավորությունը, վոր պիտներները աճում են և աշխատում: Միանդամայն բնական ե, վոր յերեխաները կորցնում են իրենց հավատը ղետի կոլեկտիվը և մեր կոլեկտիվները «հոսում են»:

Սխալ ե, յենթադրել, վոր կարելի յէ առանց ինքնազործությունը զարգացնելու կոլեկտիվում ձեռք բերել պիտներական աշխա-

տանքի կենդանի ձեւը և կենդանի բովանդակությունն: Յեթև այս ամենը ճիշտ է, վորի ժամանակ մենք խոսեցինք վերևում (իսկ այդ ճիշտ է, վորովհետեւ մեր ամրողջ պրակտիկան ապացուցում է այդ), առաջ ճիշտ է և այն, վոր այն կոլեկտիվում, վորտեղ չկա յերեխաների ստեղծագործական բուռն ինքնագործություն և ձեւներեցություն, աշխատանքի բովանդակությունը և ձեւը կլինեն շատ ինեղճ և աղքատ: Այնաևդ անխուսափելի կերպով կտիրի ձմնձրույթը, անդործությունը, լավագույն դեպքում թմրկահարություն և միայն թմրկահարություն:

ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԸ

Մեծահասակների հարցի լուծման ճանապարհին գոյություն ունեն մեծ դժվարություններ: Մենք սիրում ենք հաճախ խոսել այն մասին, վոր կոլվարները պետք են հենվեն մեծահասակների վրա, պետք են կարողանան ոգտագործել նրանց: Յեվ պետք են տսել, վոր մենք շատ հաճախ բավականաչափ հաշվի չենք առնում այն դժվարությունները, վորոնց հանդիպում են կոլվարն այս հարցում: Մեծահասակ յերեխաները իրենց տարիքով, իրենց ուժերով, իրենց փորձառությամբ, վոր նրանք ձեռք են բերել կոլեկտիվում յեղած ժամանակ, պետք են լինեն կոլեկտիվի հիմնական ղեկավարների թեկնածուները: Նրանց շարքերից մենք պետք են ստանանք հիմնական «հրամանատարական ուժերը»:

Բայց այստեղ կա մի համար թուածական մուլտիկից շիվում և մեծ առաջնային դիմուն, վոր հենց 15-16 տարեկան աշխատավոր գժվար և ներզրավել աշխատավոր կոլեկտիվում։ Հաճախ ջոկատու պղակներ գրեթե գոյություն չունեն։

Նեշտությամբ կարելի յե նկատել, վոր մեծահասակ յերեխաները աղմկում, անկարգություններ են անում ջոկատում։ Ի՞նչն ե դրա պատճառը։ Դրա պատճառը միջավայրի վորոշ աղղեցությունն է։ Նույեցեք մեծահասակ յերեխաներին։ Նրանք վոչ մի տեղ, բացի ճամբարից, արուսիկներ չեն հազնում, այլ հազնում են յերկար շալվարներ, սարքում են իրենց մազերը, աշխատում են «լուրջ» կերպարնք ընդունել։ Նրանց թվում ե արդեն, վոր տմոթ և մյուսների հետ խաղալ։ Մի խոօքով այդ մեծահասակ պիտներները աշխատում են ցույց տալ իրենց չափահասներ՝ այդ բառի վատ իմաստով։ Նրանք աշխատում են ձեռք բերել այն բոլոր վատ սովորությունները, վոր կան մեզանում, յերք մենք ծանրաշարժ ենք չափից ավելի «լուրջ», չնմանվելով մեր ավագ ընկերներին, չին բայց չեկներիս, վորոնք հակառակ իրենց 50-60 տարիքին, չեն կորցրել կենսունակ աշխուժությունը, դյուրաշարժությունը, չեն կորցրել այն լավագույն հատկությունները, վորոնք անհրաժեշտ են կոլեկտիվ կյանքի և աշխատանքի համար։ Մեզանում դժբախտաբար քիչ են այդ հատ-

կությունները և մեծահասակները շատ շուտով են վերցնում մեր վատ հատկությունները:

Դրա համար մենք դնելով մեծահասակների հետ կատարվելիք աշխատանքի, նրանց զեկավարության մեջ ներգրավելու հարցը, պետք է հաշվի առնենք այս հիմնական դժվարությունները և խմանանք, վոր մեծ աշխատանք պետք է կատարել մեծահասակների հետ։ Պետք է համառ կերպով բացատրել յերեխաներին այդ սովորությունների մնասակարությունը, խոսել նրանց հետ այն խնդիրների մասին, վորոնք դրված են նրանց առաջ ջոկատում։ Բայց այս որինակներով մենք չենք ուզում ասել, վոր պիտիներ կոլեկտիվի աշխատանքների ընթացքում զեկավար ու պատասխանատու պարտականություններ պետք ետալ միայն մեծահասակ պիտիներներին, կամ միայն նրանք են մեր հիմնական կաղըները։ Այլ ցանկանում ենք ասել, վոր վոչ մի բողեշպետք և մռառնալ, վոր մեծահասակները, այն կաղըներն են, վոր մենք կարող ենք և պետք ետառաջ քաշենք կոլեկտիվում զեկավար դեր կատարելու, վորովհետեւ այդ տարիքում պատասին վորոնում են ինքնուրույն, կազմակերպչական դործեր։

ԶՄՈՒԱՆՑԼ ԴԱՍԱԿԱՐԳԱՑԻՆ ՍԿԶԲՈՒԽՔԸ

Մեր ակտիվի սոցիալական կազմի հարցը խոշորագույն մի հարց ե, վոր մենք իրավունք

չունինք մոռանալու : Այդ հարցը դնում են իւրինք յերեխաները :

Անպայման մենք պետք ե առանձնապես շեշտ դնենք քաղաքում բանվորների յերեխաներից, իսկ գյուղում բատրակ-կոլիոզնիկ, չքավոր յերեխաներից ակտիվ առաջ քաշելու վրան : Մեր յերկրում տեղի ունեցող դասակարգային պայքարի ծավալումը պահանջում է ոյզ : Մինչդեռ պրակտիկան ցույց ե տալիս, վոր բանվորների և բատրակ-չքավորների յերեխաները շատ հաճախ մնում են ստվերի մեջ : Դրա պատճառն այն է, վոր կոլեկտիվներում մենք մինչև այժմ բավարար չափով չենք սրել դասակարգային մոմենտը :

Պետք ե գործը այնպես դնել, վոր պիոները հասակ կերպով դիտենա դասակարգերի գոյության և դասակարգային պայքարի մասին, կարողանա մասնակցել այդ պայքարին, դիտենա, վոր պիոներ կոլեկտիվի ներսում կան յերեխաների դասակարգային տարրեր խմբեր, կան նաև մեզ խորթ հասարակական խմբերից դուրս յեկածներ : Զայնազուրկի յերախայի վրա աղղում ե ընտանիքը—այդ հասկանալի յե, որա հաճար միշտ վտանգ կա, վոր մեզ անհարազար դասակարգային խուվերին պատկանող յերեխաները ընտանիքի աղղեցության տակ կարող են դառնալ դասակարգային թըշնամիներ : Գործնականում մենք ունենք նման շատ որինակներ :

Մենք պետք ե պիոներներին զինենք դասա-

կարգային աշալրջությամբ, մենք պետք ե
միանդամայն պարզ և վորոշ տսենք նրանց,
վոր մեղ անհարադատ դասակարգային խմբա-
վորումներին պատկանող այն յերեխաները,
վորոնք դանվում են կոլեկտիվում, սկստք ե
դառնան մեր կողմնակիցները, մենք պետք ե
աշխատենք վորպեսզի նրանք ակտիվ կերպով
պայքարեն այն ընտանիքի դեմ, վորի մեջ մե-
ծանում են նրանք:

Այս հարցի կապակցությամբ դրվում ե
նաև մեր պիոներ-ակտիվի սոցիալական կազ-
մի հարցը: Ինչպես տեսանք, հաճախ կոլեկտի-
վում ակտիվ աշխատանք կատարելու համար
ընտրում են լավ ճառող յերեխաներին, վո-
րոնք կարողանում են «վայլել»: Մենք ամենքս
գիտենք, վոր ժառայողների, ինչպես և ձայ-
նազուրեկների յերեխաները իրենց զարգացման
մակարդակով ավելի ակտիվ են ցույց տալիս
իրենց մեր ջոկատներում (գեթ արտաքի-
պես), իսկ բանվորների յերեխաները հաճախ
անտաշ են կոչտ-կոպիտ, սակավախոս և ընդ-
հանրապես քաշված: Շատ հաճախ պիոներնե-
րը նրանց չեն նկատում, իսկ յերբ մոտենում
են ողակավարի ընտրության հարցին, ընտ-
րում են այնպիսիներին, վորոնք ավելի ճոճը-
ռան խոսել գիտեն և ավելի գրադետ են: Հենց
դրա համար ակտիվ ընտրելիս մենք պետք ե
ոգնենք պիոներներին, նայել և տեսնել այդ
լուակյաց յերեխաներին (բանվոր, չքավոր)
ոգնել պիոներներին դանելու այդ յերեխանե-

ըի մեջ գրական հատկություններ, վորոնք ան-
հրաժեշտ են վորես աշխատանք կազմակեր-
պողի համար:

Աւքեմն ովիսներական ստորին ակտիվի սո-
ցիալական կազմի խնդիրը պետք է լինի մեր
ուշադրության կենտրոնում: Մեր ողակավար-
ների, ողնականների, ի պատիվ խմբակների
զեկավարների ընտրության ժամանակ պետք
է ընտրենք բանվորների, կուտնակականնե-
րի, չըավորների, բատրակների և աշխատա-
վոր դյուզացիության վերեխաններին:

Մի քանի խոսք կոմյերիտական կորիզի
մասին, պարզ և, վոր յերբ մենք խոսում ենք
ովիսներ-ակտիվի և առանձնապես մեծահա-
սակների ակտիվի մասին, մենք խոսում ենք
տուաջին հերթին կոմյերիտական կորիզի մա-
սին: Մենք պետք ե այնպես անենք, վոր կոմ-
յերիտական բջիջները կոմյերիտական կորի-
զի վրա նայեն, վորպես այն յերեխանների խըմ-
րի, վորոնք անմիջականորեն ովիսներական աշ-
խատանք են կատարում և պատասխանատու-
յեն ջոկատի և նրա զեկավարման համար:
Դեռ և փորձել դումարելու բջիջների բյուրո-
ների ժողովներ կոմյերիտական կորիզի հետ
միասին գննելու կոլեկտիվի խորհրդի նախա-
դահի թեկնածությունը: Կարելի յէ հարցը
դնել, վոր կոլեկտիվի խորհրդի նախադահնե-
րը լինեն գլխավորապես ովիսներ-կոմյերիտա-
կանները և դրանով նրանց անմիջականորեն
կապել կոմյերիտական բջիջի հետ: Կոմյերի-

տական բջիջը ջոկատի առաջ այս կամ այն
խնդիրը դնելիս պետք է առանձնապես զբույց
ունենա, առանձնապես մշակի այդ խնդիրները
կոմյերիտական բջիջի հետ միասին այն տե-
սակետից, թե ի՞նչ պարտականություններ են
դրված այդ յերեխաների վրա, վորպես կոմյե-
րիտականների, վորպես բջիջի ներկայացու-
ցիչների կոլեկտիվում։ Իսկ մեղանում հաճախ
այնպես ե լինում, վոր պիոններ-կոմյերիտա-
կանները անկարգապահ են, հրաժարվում են
աշխատանքից, չեն կարողանում անձնական
շահերը կապակցել հասարակական շահերին,
ջոկատի և կոլեկտիվի խնդիրներին, որինակ
չեն հանդիսանում յերեխաների համար։

3. ՄԵՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուրեմն ի՞նչ պետք է անենք մենք։ Ամե-
նից առաջ պետք ե նկատի ունենալ, վոր ան-
կարելի յե լուծել յերեխաների խնդնագործու-
թյան ծավալման հարցերը, յեթե զուգընթաց
կերպով չլուծվի զեկավարների պրորեմը։

ԿՈԼԵԿՏԻՎԻ ՑԵՎ ԿՈԼՎԱՐԻ ՄԱՍԻՆ

Կոլեկտիվի խորհուրդը։ Ինչպես պետք է
աշխատի նու։ Կոլեկտիվի խորհրդին պետք է
իրավունք տալ վոչ միայն լինել ջոկատի զե-
կավարը, այլ և հնարավորություն տալ նրան
իրադործել այդ իրավունքը, իսկ այդ հնարա-
վորությունը նրան կարող ենք տալ միայն այն
ժամանակ, յերբ մենք իրոք վստահ կլինենք,

վոր ակախիվն ընդունակ և մեծ դեր խաղալու
կոլեկտիվի կյանքի զեկավարման դործում:

Կոլեկտիվի խորհուրդը պետք և լրջորեն
պատասխանատու լինի կոլեկտիվի դրության,
նրա սխալների համար: Կոմյերիտական բջիջը
պետք և ավելի հաճախակի հիշեցնի կոլեկտիվի
խորհրդին նրա ալարտականությունները, վոր-
պես ջոկատի զեկավարի, նրա պատասխանա-
տվությունը կոլեկտիվի դրության համար թե՛
պիոններների և թե՛ կոմյերիտական բջիջի ա-
ռաջ:

Պետք և աշխատել, վոր կոլխորհրդում յե-
րեխաները հարցերը քննելիս իրոք ըմբռնեն
նրանց եյությունը: Պետք և աշխատել, վոր
կոլ. խորհուրդը հետեւի ընդունված վորոշում-
ների իրադորժմանը, վորպեսզի կոմյերիտա-
կան բջիջը կոլեկտիվի հարցերը քննելիս չժո-
ռանա կոլ. խորհրդին: Պետք և աշխատել, վոր
կոլ. խորհուրդը իրավունք և հնարավորու-
թյուն ունենա ուղղակի կերպով կապվելու
պիոններների բյուրոյի և կոմյերիտական բջի-
ջի հետ ջոկատի աշխատանքի մի շարք կարե-
վոր հարցերի շուրջը: Պետք և աշխատել, վոր
կոլեկտիվի, պիոններ-բյուրոյի և կոմյերիտա-
կան բջիջի միջև կապող ողակ հանդիսանա վոչ
միայն կոլվարը այլ և կոլեկտիվի ընտրովի որ-
դանը, նրա խորհուրդը:

Ողակ: Պետք և աշխատել, վոր ողակավա-
րը իրոք կազմակերպչական դեր խաղա իր ո-
ղակի ներսում: Որինակ: Յերբ պիոններները

դիմում են զանազան հարցերով, նրանց պատասխանում են, վոր նախ պետք ե դիմել ողակավարին, հիշեցնում են յերեխաներին, վոր իրենց բոլոր հարցերը նախ պետք ե լուծեն ողակի ներսում։ Այս բոլոր մանրամասնությունները մեծ դեր են խաղում, յերբ կրում են վորոշ սիստեմի բնույթ, վորը յերեխաների գիտակցության մեջ արժատացնում ե այն միտքը, թե ողակը իրոք միայն անունով չե, վոր գոյություն ունի այլ առանձին դեր ու հեղինակություն ունի, ուրեմն և ամեն հարցով պետք ե դիմել կոլվարին կամ կոլխորհրդին։ Այս հանգամանքը չափազանց վտանգավոր է։ Ողակին վերաբերվող ամեն մի հարց նախորդ պետք ե քննել ողակում ապա նոր կոլխորհրդում։

Կոլվարը պետք ե շատ մեծ ուշադրություն կենարոնացնի ողակավարների աշխատանքի վրա, շարունակ սովորեցնի, ցույց տա նրանց, թե ինչ և ինչպես պետք ե անել, ընկերաբար բաշտառի, թե ի՞նչն ե սխալ կատարված նըրանց մոտ, միաժամանակ առաջ չգաղի նրանցից, այլ ասի «փորձիր այսպես անել, և քեզ կհաջողվի»։ Յերեմին, յերբ անհրաժեշտ է, կոլվարը պետք ե ներկա լինի ողակի հավաքին, յերեխաներին տա համապատասխան խորհուրդներ, վորպեսզի նրանք իրենց ողակավարին աջակցեն, իսկ յեթե ողակավարը արժանի չե դրան, սղնի ընտրել ավելի լավ ողակավարի։

Մենք պետք և աշխատենք, վոր ողակը ի-
րոք ինքնուրույն դառնա իր աշխատանքում։
Այդ նպատակին կարելի յեւ և ոկտօք և հասնել
ամենից առաջ նրանով, վոր մենք հրաժար-
վում ենք իոլ. խորհրդի պատրաստի անվերջ
առաջադրանքների սիստեմից։ Բայց մենք գը-
րան կարող ենք հասնել այն ժամանակ, յերբ
սովորեցնենք յերեխանեցին դիտել իրենց շըր-
ջապատող կյանքը և գտնել այնտեղ իրենց ու-
ժերը գործադրելու ասպարեզ, յերբ ողակը և
ողակի յուրաքանչյուր անդամը շարունակ
կմածի այն մասին, թե արդյոք իրենց թա-
ղում կա՞ն այնպիսի յերեխաներ, վորոնք կա-
րիք ունեն պիտներական ողնության, թե ար-
դյոք իրենց գյուղում կա՞ն յերեխաներ, վո-
րոնք չեն սովորում, ինչո՞ւ չեն սովորում, ին-
չով կարելի յեւ նրանց ողնել և այլն։

Մենք պետք և աշխատանքը այնպես գը-
նենք, վոր յերեխաների մտքում ողակը ար-
մատանա, վորպես իրոք ինքնապործ աշխա-
տանքային բջիջ կոլեկտիվում։

Մենք պետք և աշխատենք, վոր յերեխա-
ները իրավունք ձեռք բերեն քննողատելու
կոլյարի սիալները։ Ի հարկե, յես չեմ առում,
վոր ոկտօք և քննողատությունը դարձնել
խաղ, յես նկատի ունեմ այն, վոր դեկավորը
պիտներների ավագ ընկերն ե՝ կոլիկուսիֆի դե-
կավարը։ Այդ նշանակում ե, վոր նա զեկա-
վարում է նաև յերեխաների քննադատությու-
նը; ինչպես և իր սեփական աշխատանքի քըն-

նադատությունը, վորպեսզի նա պատասխանատու զգա իրեն յերեխաների առաջ: Սա այն կարեվորագույն միջոցն է, վորով պետք է պայքարել ղեկավարների այն թեքումների դեմ, վորոնք պրտահայտվում են ջոկատի վերաբերմամբ հրամանատարի, ղեկավարի, պետի դեր կատարելու մեջ:

ՈՒՂՂԱԿԻ ԿԱՊՎԵԼ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԲԶԻՃԻ ՀԵՏ

Գիտներները իրավունք պետք է ունենան գնալ կոմյերիտական բջիջը և քարտուղարի, առիտոպրովի ու այլ ղեկավար ընկերների ողությամբ ժողովում ղնել մի շարք հարցեր կոլվարի աշխատանքում նկատված աննորմալությունների մասին: Այսուղ, իհարկե, պիտի ներների քննադատությունը պետք է ունենալուրջ հետեւանքներ կորվարների վերաբերմամբ, այլապես այդ բոլորը կոպեկ չարժե: Կոմյերիտական բջիջը պետք է լուրջ կերպով ստուգի պիտներների ցուցմունքները կորվարի ոխալների մասին, և յեթե այդ պահանջվում է, չպետք է կանոք առնի նույնիսկ կորվարին աշխատանքից հեռացնելու առաջ, միաժամանակ կորվարին յենթարկելով հասարակական դատի (կոմյերիտական դռնբաց ժողովում, կոլեկտիվի, կուսակցականների և բանվորների հետ միասին): Սա մեծ չափով կնպաստի լուսաբանելու կհմ յերիտմիության ղեկավարության խնդիրները պիտներների վերաբեր-

մամբ և կոլվարի աշխատանքի առանձնահատ-
կությունները, կուժեղացնի կոմյերիտական-
ների հետաքրքրությունը դեպի պիոներ-աշ-
խատանքը և այլն։ Իսկ լավ կազմակերպված
հառարակական դատը կարող է դառնալ լուրջ
դիսպուտ չափահաս բանվորների մասնակցու-
թյամբ, այն մասին, թե ինչպես պետք է մո-
տենալ յերեխանների դաստիարակության, նը-
րանց զեկավարման խնդիրներին։ Իրենք պիո-
ներները կարող են մեծ զեր խաղալ նման ժո-
ղովներում, նրանց պետք է հնարավորություն-
տալ շարժելու ծնողներին, հետաքրքրություն
արթնացնելու նրանց մեջ։

Կոլեկտիվի կամ բազայի հավաքում կոլ-
վարի աշխատանքը քննելիս անպայման պետք
է ներկա լինեն կոմյերիտական բջիջի բյուրո-
յի ներկայացուցիչները։ Այդ հավաքույթի զե-
կավարողը չպետք է լինի քննադատող կոլվա-
րը, վորպեսզի յերեխանները չքաշվեն։

Մենք պետք են աշխատենք նաև, վորպես-
զի պիոներ կոլեկտիվի աշխատանքի ամենի
կամ պակաս կարեռը բոլոր հարցերը, վորոնք
քննվելու յեն կոմյերիտական բջիջում, քննվեն
պիոներ-ակտիվի, պիոներ կոմյերիտականնե-
րի ներկայությամբ և անպայման կոլեկտիվի
խորհրդի մասնակցությամբ։ Այդ կողմի բջի-
ջին ամենի լավ ծանոթանալ և գտնել քննվող
հարցի ճիշտ լուծումը։ Այս բոլոր միջոցա-
ռումների հետեւանքով տեղերում, բջիջներում
կարելի յե այնպես անել, վոր յերեխանները

իրոք զգան, վոր իրենք իրենց կազմակերպության տերերն են, վորպեսզի զեկավարները ըմբռնեն և իրադործեն իրենց խնդիրները, դառնան ավագ ընկերներ և վոչ թե խնամակալներ, վորպեսզի մեր դիրեկտիվներում մենք չսավառնենք ողում, այլ հաշվի առնենք, թե ինչ են ուզում յերեխանները և ի՞նչ կարող են անել նրանք:

ՌԱՅՈՆԱԿԱՆ ԱԿՑԻՎԸ

Կարող ե թվալ, վոր այս հարցը անմիջական կասկ չունի կոլվարի հետ։ Այդպես չե։ Կոլվարը պետք է հաշվի առնի լավագույն ակտիվիտոններին, ըրջանային աշխատանքների առաջ քաշելու նշանակությունը։ Այդ աշխատանքի համար յերեխանների ճիշտ ընտրություն կատարելու և նրանց ողնելու տեսակետից նրա գերը չափազանց մեծ է։ Խայտնական (շրջանային) բյուրոների աշխատանքին յերեխաններին մասնակից դարձնելու համար կան աշխատանքի մի շարք հիմնավի ձևեր, վոր պետք ե զարգացնել։

Մեր պրակտիկան ցույց է տվել, թե վորքան կենսունակ են պիոներների ուսունական շտարները, վորոնք զեկավարում են աշխատանքի կոնկրետ ճյուղեր, ամենից առաջ հարվածային գործերը։ Անհրաժեշտ է դարձացնել կոլեկտիվների յենթառույնական խորհուրդներ ստեղծելու վորձը հարվածային աշխատանքներ կատարելիս, յերբ խորհուրդները ի-

շագործում են կոլեկտիվի մի խմբի ղեկավարությունը։ Կոլեկտիվների յենթաշրջանային խորհուրդների միջոցով ռայոնական շտաբի ղերեկտիվները հասցվում են ջոկատներին, նրանք շտաբին իրադեկ են դարձնում ջոկատներում տեղի ունեցող աշխատանքների և անցքերի մասին։ Ջոկատների յենթաշրջանային խորհուրդը, ապահովելով շրջանի ղերեկտիվները պիոներներին հասցնելու դործը, մեծ չափով առաջ ե մզում հետ մնացող կոլվարներին։

Պետք է աշխատել, վորակեսղի շրջանային շտաբները և ջոկատների յենթաշրջանային խորհուրդները յերեխանների մասսայի համար չինեն պատահականություն, անակընկալ, այլ վորակեսղի նրանք ընտրվեն և հաշվետուլինեն ակտիվի կոնֆերանսների առաջ։

Պրակտիկան անպայման արդարացրել ե պիոներական դրուժինաների և բրիդաղների ստեղծումը բյուրոյին կից, կոնկրետ ձեռնարկումներն անցկացնելու համար։

«Թեթև հեծելաղորի» խմբերը պետք է հատկապես պայքար մզեն այն բյուրոկրատական յերեւյթների դեմ, վորոնք նկատվում են պատկան. կոմ. կազմ. բջիջների և շրջբյուրուների կողմից կոլեկտիվների ղեկավարման ասպարիզում, ստուգելով, թե շրջբյուրոյի և պիոներական շտաբների ղերեկտիվները ինչպես են հասնում կոլեկտիվներին և պիոներներին, ի՞նչպես և ղեկավարում բջիջը, քնած չե՞ ար-

դյոք կոլվարը, կոլեկտիվի խորհուրդը ժարտական աշխատանք կատարում ե, թե վոչ, և այլն: «Թեթև հեծելազորը» պետք ե անողոք հարձակում դործի այն բյուրոկրատական վերաբերմունքի դեմ, վոր ցույց ե տրվում պիոներներին արհմիութենական, կոռավերատիվ և այլ հասարակական կողմակերպությունների կողմից:

Մի շարք կազմակերպություններում աշխատում են պիոններների հրահանգչական բրիգադներ, վորոնք վոչ միայն կարողանում են ուստի գործել գործերի խոկական դրությունը կոլեկտիվում, այլև գործնական ոգնություններին ցույց տալիս աշխատանքի կազմակերպման գործում: Յերեխանները դալիս են ողակները, ներկա եյին լինում հավաքներին և վոչ միայն արձանագրում եյին, թե ինչ ե կատարվում այնտեղ, այլ տեղն ու տեղը, մյուս ողակների փորձի հիման վրա ցույց եյին տալիս, թե ի՞նչպես պետք ե դնել այս կամ այն գործը:

Պետք ե պրակտիկա դարձնել ակտիվի գործնական խորհրդակցություններ դումարելը, վոչ թե հանդիսավոր կոնֆերանսներ, այլ գործնական խորհրդակցություններ, լրջորեն քննելով այն հարցը, թե ի՞նչորես պետք ե դնել այս կամ այն աշխատանքը կոլեկտիվներում:

Ծուրագանչյուր խորհրդակցություն պետք ե նվիրվի աշխատանքի մի վորեւ ընազավառի: Արինակ, դպրոցական ինքնավարության

մեջ ընտրված պիոներների աշխատանքը և նը-
րանց ղեկավարումը ֆորմուստի, կոլեկտիվի
կողմից, ֆորմուստը ինչպես և ողնում դպրո-
ցին, ժոտենալու արտադրությանը, ֆորմու-
տի, կամ կոլեկտիվի գերը կրոնական ազդե-
ցությունների դեմ դպրոցում պայքար մղելու
տապարիզում, ինչպես պատրաստվել գալիք
պատկի և այլ «տոների» դեմ պայքար մղելու
համար:

Խորհրդակցությունը շատ բազմամարդ
չափաք և լինի, վորպեսզի յերեխաները հնա-
րավորություն ունենան արտահայտվել և լսել
մյուսներին: Դրա համար մեծ շրջաններում ա-
վելի լավ և ակտիվը հավաքել խմբերով, կամ
նախաղես շրջբարոյին կից անցկացնեն կա-
րեվորագույն բազաների և դպրոցների ամենից
տվելի կայուն յերեխաների խորհրդակցու-
թյուններ, վորպեսզի հետո նըրանց ողնու-
թյամբ կարելի լինի անցկացնել ակտիվի յեն-
թաշրջանային խորհրդակցություններ նույն
հարցի շուրջը:

Պետք և սիստեմ դարձնել նաև պիոներա-
կան ընտրովի կոնֆերանսները (շրջանային,
մարզային), ճիշտ այնպես, ինչպես յեղան հա-
վաքի ժումանակ (դժբախտաբար վոչ ամեն
տեղ):

Այս ոլէուներական կոնֆերանսներում պետք
է քննության յևնթարկվի պիոներների բյուրո-
յի ամրող աշխատանքը, բայց այնպես, վոր
այդ քննադատությունը, իհարկե, ունենա-

լուրջ հետեանքներ նրանց համար, վորոնց կը-
քննադատի կոնֆերանսը։ Կրկնում ենք, դրանք
պետք ե լինեն ընարովի կոնֆերանսներ։ Յեթե
շրջանային բյուրոն իր առաջ խնդիր ե դնում,
պիոներական ակտիվին հաշիվ տալ իր կատա-
րած աշխատանքի մասին, պետք ե այնպես ա-
նել, վոր կոնֆերանսի պատգամավորները, ի-
րոք ընտրվեն ջոկատներում, վորապեսի տրվ-
յալ շրջանի բոլոր ջոկատները իմանան, վոր
կոնֆերանս և գումարվում, վոր նրա առաջ
դրված են այս կամ այն խնդիրները, վորպես-
պի այդ կոնֆերանսից հետո նրանք հնարավո-
րություն ունենան հաշիվ պահանջել իրենց
պատգամավորներից։

Ահա այն միջոցառումների գումարը, վոր
արդեն հաստատվել և ստուգվել ե մեր գործ-
նական աշխատանքով, վոր մենք ամեն կերպ
պետք ե զարգացնենք, վորոնք մեղ բավակա-
նաչափ լայն հնարավորություններ կտան սիրո
ներական տկտիվին մասնակից դարձնելու կազ
մակերպության ղեկավարման գործին, և ի-
րոք ողոտագործելու պիոներական կազմակեր-
պության բյուրոյի աշխատանքին ողնելու հա-
մար։ Պիոներական ակտիվը հասարակական
խոշոր ուժ է, վոր մենք թերագնահատել ենք,
բայց վորը մենք անպայման պարտավոր ենք
գնուհատել և մեղ ողնության կանչել։

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԶԽԱՂԱԼ

Մենք պետք ե աշխատենք նույնպես, վոր-
պեսդի կոմյերիտական կոմիտեները, դիրեկ-

արիվներ տալով պիոներների բյուրոյին, հաշվի առնեն պիոներական ակտիվի այն խորհըրդակցությունները, վոր գումարում և պիոներական բյուրոն:

Պետք ե աշխատել, վորպեսզի կոմյերիտմիության կոմիտեները և կոմյերիտական կոնֆերանսները, գնահատական տալով բյուրոյի աշխատանքին, առաջին հերթին այդ աշխատանքը գնահատեն այն տեսակետից, թե վո՞ր չափով բյուրոն կարողացել ե պիոներական ակտիվին մասնակից դարձնել իր աշխատանքին, վո՞ր չափով նա կարողացել է հենվել այդ ակտիվի վրա:

Բյուրոյի աշխատանքի քննադատությունը պետք ե ունենա լուրջ հետևանքներ, վորպեսզի յերեխաները իմանան, (անհրաժեշտ ե, վորպեսզի բյուրոն այդ մասին տեղեկացնի յերեխաներին), թե ինչպես են իրազործված պիոներական կոնֆերանսի այս կամ այն վորոշումը, այս կամ այն ցանկությունները և առաջարկությունները: Դժբախտաբար առայժմ այդ չկա, նույնիսկ կենտրոնում:

Պետք ե աշխատել, վորպեսզի պիոներների բյուրոները իրոք յենթարկվեն պիոներական մասսայի վերահսկողությանը: Սակայն այդ բնավ չի նշանակում, վոր պիոներների բյուրոն պետք ե «մանկանա»: Կան լայն հնարավորություններ, առանց կեղծելու յերեխաների հետ, հաստատ հիշելով մեր զեկավար դերը պիոներ կոլեկտիվի վերաբերմամբ, դառնալ

իրոք յերեխաների վերահսկողության յենթակա, վորապեսզի չլինի այնպիսի դրություն, յերբ պիոները վոչինչ չգիտե շրջանային բյուրոյի դոյության մասին։ Նա, ով ուշադիր հետեւել ե յերեխաներին, շատ լավ գիտե, վոր յերեխաները շուտ են հասկանում իրենց հանդեպ ցույց տրվող վերաբերմունքի կեղծ լինելը։ Նրանք զգում են, յերբ ենք մենք նրանց հետ լուրջ խոսում, վորպես ավագ ընկերներ, յերբ ենք խոսում միայն պարտականությունից դրդված։ Յեվ չկա ավելի վատ բան, քան, յերբ նրանք զգում են այդ կեղծ չեշտը։ Նրանք մեզ չեն հավատում և իրավունք ունեն չհավատալու, յեթե նկատեն այդ կեղծ վերաբերմունքը, հետեւաբար նրանց վրա հենվելու, նրանց ոգնության մասին խոսք լինել չի կարող։ Մեր մեթոդը յերեխաների գիտակցական դաստիարակությունն է, և վոչ թե մեխանիկորեն նրանց գլխին ամեն մտեսակի «բարոյական» խրատներ կարդալը։

ԱԿՏԻՎԸ ՊԵՏՔ Ե ՊԱՏՐԱՍՏԵԼ

Պարզ ե, վոր այն ամենը, վորի մասին խռոցինք վերենում, ինքնիրեն չի կատարվում։ Ակտիվ յերեխաներ շատ կան, բայց յերեխաների ակտիվը պետք ե ստեղծել, պատրաստել։ Զխոսելով այն մասին, վոր իրենք կորիարները պետք ե կարողանան յերեխաների շարքերից հայտնաբերել լավ կազմակերպիչների, նրանք պետք ե ոգնեն յերեխաներին իրենց համար ընտրելու լավ դեկավարներ։ Պետք ե սո-

վորեցնել յերեխաներին, վորպեսզի նրանք կարողանան իրենց ընկերների մեջ նկատել զեկավարի լավագույն հատկությունները։ Սա լուրջ խնդիր է։ Մենք ամեն որ թե՛ մեծահասակների և թե՛ վոքրահասակների շրջանում տեսնում ենք այն հետեանքները, վորոնք արդյունք են սեփական շարքերից կազմակերպիչներ առաջ քաշելու անկարողության։

Բայց ակտիվը հայտնաբերել դեռ բավական չեւ։ Պետք են նրան պատրաստել աշխատանքի, պետք են նրան սովորեցնել, որնել նըրան։ Այդ ողնությունը, այդ ուսումը չպետք են պատահական բնույթ կրեն, այլ պետք են դառնան սիստեմ, մտածված լինեն լրջորեն և ապահովեն անհրաժեշտ պայմաններով (մեթոդական ձեռնարկեր, միջոցներ և այլն)։

Նու ով կարծում եւ, թե հեշտ գործ ե պիտներական ակտիվը հայտնաբերել և դաստիարակել, խորապես սիսալվում եւ։ Անհրաժեշտ եւ ուշի ուշով հետեւել յերեխաների վարմունքին, կորեկտիվում, տանը, փողոցում, վորպեսզի պարզ լինի թե ի՞նչ ե պահանջում յերեխան իր զեկավարներից, ի՞նչն են նրանք գնահատում իրենց զեկավարների մեջ և այդպիսով յերեխանների շարքերից հայտնաբերել ամենայնանդուն, ձեռներեց, կոլեկտիվիստորեն տրամադրված յերեխաններ։

ԹԻՍՈՒՄԸ ՎՃՌԱԿԱՆ ՈՂԱԿ Ե

Կոլեկտիվի խորհուրդը պետք է դարձնել
կոլվաբների մշտական, սիստեմատիկ դպրոց։
Կոլեկտիվի խորհուրդը վոչմիայն պետք է
հրահանգի յերեխաներին, թե ի՞նչ պետք է ա-
նել առաջիկայում այլև պետք է ցույց տա, թե
ի՞նչպես պետք է անել։ Կոլեկտիվի խորհրդի
ժամանակի վորոշ մասը պետք է նվիրվի հրա-
հանգչական զբաղմունքների—ցույց տալու
յերեխաներին նոր յերդեր, նոր խաղեր և այլն։
Յեթե որինակ կոլեկտիվի խորհուրդում վորո-
շում և կայացվում, դեպի յենթաշեֆ գյուղը
դահուկային արշավ կազմակերպելու մասին,
ապա վատ չի լինի, յեթե այդ արշավը փոքր
ձևով նախապես անցկացվի կոլեկտիվի խոր-
հուրդի հետ միասին, վորապեսզի ողակավար-
ները գործնական կերպով պատրաստվեն ջո-
կատային արշավի համար։ Հասկանալի յե,
վոր նման բեպետիցիայից հետո ակտիվը իրոք
կզեկավարի իր ողակներին արշավի ընթաց-
քում և մեծ չափով կհեշտացնի ողակավարի
աշխատանքը արշավում։ Կարելի յե բերել նը-
ման բազմաթիվ որինակներ, սակայն բոլորն
ել խոսում են նույն բանի մասին, վոր կոլեկ-
տիվի հավաքը վոչ միայն պետք է լինի կոլեկ-
տիվի գործերը քննելու վայր, այլ և մի դրա-
բոց, վորը գործնական կերպով պատրաստում
և ակտիվը կատարելու իր գերը ողակներում,
խմբակներում, անկազմակերպ յերեխաների
ըրջանում և այլն։

Մենք պետք եւ սիստեմ դարձնենք ողակու-
վարների բազային կուրսերը, առանձնապես
ողակավարների հերթական վերընտրություն-
ների կապակցությամբ։ Ողակավարների ընտ-
րությունից հետո պետք եւ ցույց տալ նրանց,
թե ինչպես պետք եւ աշխատել, ինչպես սկսել
պործը։ Նման կուրսերից հետո յերեխաները
գալիս են իրենց ողակները միանդամայն նո-
րոդված։ Նրանք իրենց գդում են միանդամայն
վստահ և համարձակ, վորպես ողակավար-
ներ։

Մենք պետք եւ սիստեմ դարձնեն նույնպես
մի շարք շրջանային միջոցառումներ։ Պիոներ-
ների բյուրոյին կից պետք եւ գոյություն ու-
նենան պիոներական ակտիվիտի պատրաստման
կուրսեր, զվարճարանների (ՅԱՏԵՐԻԿ) ու-
ղիությաների, ավիո-լսմբակների կազմա-
կերպիչների, պատի թերթերի խմբագիրների
կուրսեր, կոլլեգուրհուրդների նախագահների
դպրոցներ և այլն։ Նման կուրսերի կազմա-
կերպումը ապահովում է մի կողմից կոնկրե-
տիվների համար ակտիվ պատրաստելու գոր-
ծը, իսկ մյուս կողմից մեծ ոգնություն է ցույց
տալիս շրջանային բյուրոներին։ Շրջանային
բյուրոները հնարավորություն ունեն այդ
կուրսերից իրենց համար ստեղծել զանազան
բրիգադներ՝ ոգնելու աշխատանքի համա-
պատասխան ճյուղերին։ Մենք ունենք ողի-
նակներ, յերբ ակտիվի կուրսերը պիոներների
բյուրոյին տվել են շատ արժեքավոր նյութեր

այն հարցի մասին, թե ինչպես պետք է կաղ-
մակերպել աշխատանքի այն ընադավառը
պիոններ կոլեկտիվում, վորին նվիրված են այս
կամ այն կուրսերը։ Պատրաստելով պիոններ-
ակտիվը, բյուրոն կուրսերը դարձնում է հիա-
նալի լաբորատորիա։

Մենք պետք ե ամեն կերպ տարածենք
Մոսկվայի Բառմանի ռայոնի փորձը, վորը
կարողացել ե պիոններների կենտրոնական տու-
նը հատկացնել պիոններական ակտիվի հետ
տարված աշխատանքներին։ Նրանք շաբաթա-
կան մի որ ամբողջապես հատկացնում են ակ-
տիվի հետ տարվող աշխատանքին։ Այդ որը
ամբողջ կենտրոնական ծունը իր բոլոր հրա-
հանդիչներով, խմբակներով, կայաններով
ամբողջովին յենթարկված, ե ռայոնի պիոննե-
րական ակտիվի սպասարկման խնդրին։ Յերե-
խաները այդ որը ստանում են կոնսուլտացիա
դանագան հարցերի շուրջը։ Նրանք հնարավո-
րություն ունեն այդ որը աշխատել խմբակնե-
րում, կայաններում, ստանալ նոր ունակու-
թյուններ, վորոնց կարիքը զգացվել ե նրանց
մոտ կոլեկտիվի աշխատանքի ընթացքում։ Ո-
րինակ, կոլեկտիվում ուղիությունների, զեկա-
վարը խմբակի աշխատանքում հանդիպել ե
գորոշ դժվարությունների, վոր ինքը մենակ
չի կարողացել հաղթահարել։ Յեվ ահա նո
հնարավորություն ունի ակտիվի որը դալ
Պիոններական տունը և կայանի, խմբակի հրա-
հանդիչի հետ կամ ծան արհեստանոցում կա-

տարելու համապատասխան փորձեր և գտնել
իրենց զբաղեցնող հարցի պատասխանը։ Այն-
տեղ, վորտեղ կան պիզներական ակումբներ,
նրանք նույնպես իրենց մոտ մի որ պետք ե
հասկացնեն պիզներական ակտիվին։

Ահա այն ձեռնարկումների դումարը, վո-
րտնց իրազործումը դժվար չե յուրաքանչյուր
յետանդուն կորվարի և պիզներների բյուրոյի
համար։ Կոտկած չկա, վոր սա միայն մինի-
մումն է։ Պրակտիկան, փորձը կթելազրեն մի
շարք նոր և հետաքրքրական ձեռք ակտիվի-
պատրաստման, նրա ուսուցման առաջարի-
զում։

Ակտիվի պատրաստման բոլոր անհրա-
ժեշտ միջոցառումները պետք են նախորոք հաշ-
վի առնվեն պիզներների բազաների և բյուրո-
ների աշխատանքի պլանավորման ժամանակ,
նրանց բյուջեն կազմելիս։ Այլապես կարող ե
այնպես լինել, վոր յերբ ցանկու-
թյուն և կամք կառաջանա վո՛չ ուժեր և վո՛չ
միջոցներ կլինեն այդ ցանկությունները և
կամքը իրազործելու համար։

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՑԵՎ ՊԻՌՆԵՐ-ԱԿՏԻՎԸ

Այժմ համառոտ կերպով կանգ առնենք
արտադպրոցական աշխատանքի և մեր պիո-
ներական-ակտիվի խնդրի վրա։ Համառոտ
ենք խոսում վոչ թե նրա համար, վոր այդ
հարցը կարեռ չե, այլ վորովհետեւ մենք դըժ-

բախտաբար այս բնադավառում չափապանց
քիչ փորձ ունենք։ Ներկայումս պետության
և արհմիութենական կազմակերպությունների
կողմից ծավալվող արտադպրոցական աշխա-
տանքը մեծ պահանջներ են դնում մեր ամբողջ
կազմակերպության, ինչպես և պիոներական
ակտիվի առաջ։ Մենք պետք ե աշխատենք,
վորագեսղի այն պիոները, վոր կարողացել ե
դեկավար դառնալ կոլեկտիվի ներսում, կա-
րողանանա նույնպես դառնալ իրեն մոտիկ
գոնվող անկազմակերպ յերեխաների խմբերի
դեկավարը։ Պիոներ-կոլեկտիվների կոլվար-
ները պետք ե դառնան բակի յերեխաների, ան-
խնամ յերեխաների խմբերի դեկավարներ։

Մենք գիտենք, վոր հետո դործ չե թա-
փանցել «փողոցային» յերեխաների ըրջանը։
Դա պահանջում ե, վորպեսղի ամենից ավելի
ամուր պիոներները դառնան այդ գործի նա-
խաձեռնողները։ Մենք գիտենք նույնպես, վոր
տարերային կերպով կազմակերպված յերե-
խաների խմբերին պիոներների կողմը գրավե-
լու համար պետք ե նախ նվաճել նրանց դեկա-
վարներին։ Այդ պետք է անել խելացի կեր-
պով։ Արտադպրոցական աշխատանքը ծավա-
լելիս, մենք պետք ե առանձնապես ուշադրու-
թյուն դարձնենք ամենից ավելի հետամնաց,
ամենից ավելի անկազմակերպ յերեխաների
խմբերին մեր կողմը գրավելու վրա։ Այս գոր-
ծում, վորպես հարվածային ուժ մենք պետք ե
ոգտագործենք մեր պիոներական ակտիվը, վո-

ըր պետք է անկազմակերպ յերեխաների կազմակերպման աշխատանքներին մասնակից դարձնի պիոներական ամբողջ մասսային, վորպեսզի պիոներները չնստենն իրենց ակումբում և սպասեն հույս ունենալով, թե անկազմակերպ յերեխաները ինքնարերաբար կղան իրենց մոտ, այլ գնան փողոց և այնտեղ յերեխաներին ներդրավեն կոլեկտիվի մեջ:

Աշխատելով անկազմակերպ յերեխաների հետ, մենք պետք է նրանց շարքերից հայտնարերներ մանկական ակտիվ, վորպեսզի նրա միջոցով ավելի ամուր կազմակերպենք մեր յերեխաների ազգեցությունը և առաջին հերթին այդ ակտիվը ներդրավենք մեր շարքերը: Յեզ վորովհետեւ այդ ակտիվը շատ մեծ է, ուրիմն մեր շարքերը կաճեն վոչ թե միավորների, այլ հարյուր հազարավոր յերեխաների հաշվին:

Անհրաժեշտ է գումարել անկազմակերպ յերեխաների հետ ավելի շփում ունեցող, նըրանց հետ ավելի ակտիվ և խելացի աշխատանք տանող պրոներների հատուկ խորհրդակցություններ: Պետք է կազմակերպել պիոներ-մասսավիկների, ամենից ավելի դժվար յենթարկվող անկազմակերպ յերեխաների հետ հարվածային աշխատանք կատարողների կուրսեր: Պետք է հատկապես սովորեցնել յերեխաներին, թե ինչպես պետք է մոտենալ անկազմակերպների զեկավարներին, վորոնք հաճախ գիտադրում են պիոներներին և չեն ուզում ի-

ըենց տղաների ղեկավարությունը զիջել նը-
րանց : Անկաղմակերպների հետ տարվող աշ-
խատանքի ասպարիզում հարվածային պիո-
ներների կուրսերում պետք է սովորեցնել հա-
մապատասխան խաղեր, յերգեր, այսինքն յե-
րեխաներին զինել մի շարք դորձնական գիտե-
լիքներով ու ունակություններով, վորպեսզի
նրանք հնարավորություն ունենան աշխատել
անկաղմակերպների շրջանում, այստեղ մենք
նկատի ունենք, վոչ թե այն անկաղմակերպ
յերեխաներին, վորոնք ինքնահոսով գալիս են
մեզ մոտ, այլ նրանց, վորոնք չեն գալիս և վո-
րոնց մենք պետք են կարողանանք մոտենալ ինք-
ներս :

Անկաղմակերպների ղեկավարներին ներ-
գրավելով կոլեկտիվում, մենք չպետք ենք ան-
կատենք իրենց նախկին շրջանից, ինչպես այդ
լինում են հաճախ : Այդ յերեխաները կտրում
են իրենց կապը նախկին ընկերների հետ : Ան-
հրաժեշտ են նրանց առաջ դնել հետեւյալ խըն-
դիրը՝ — աշխատի՛ր, վորպեսզի քո ընկերները
պիոներ գառնան : Մենք պետք են Արհմիու-
թյունների և Լուսրաժնի հետ աշխատենք նաև
արտադպրոցական մանկական ակտիվի հետ,
վոր աշխատում են մանկական ժրապարակնե-
րում, ակումբներում, գրադարաններում, մի
խոսքով ստացիոնար արտադպրոցական հիմ-
նարկներում : Մենք պետք են մանկական խըն-
դրակների կաղմակերպիչներին, ավագներին
հրավիրենք գործնական խորհրդակցություն-

ներին և կոնֆերանսներին, նրանց համար կազմակերպենք կուրսեր, նրանց աշխատանքին աջակցելու և ղեկավարելու համար։

Մենք զսրծն այնպես կազմակերպենք, վոր արտապարագտկան մանկական ակտիվի այդ կուրսերը խաղան յերկու տեսակի դեր, մի կողմից ամբազնդեն արտապարագոցական մանկական ակտիվը, իսկ մյուս կողմից ծառայեն վորապես միջոց և պիտներական շարքերը լայնացնելու համար։ Վոչ մի կասկած չկա, վոր բազաներին, բյուրոներին կից ստեղծված այս կամ այն խորհրդակցություններում, կուրսերում ներգրավվող 100 յերեխայից մինիմում 90 առկոսը այդ կուրսերից հետո դառնում են պիտներներ։

4. ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Յեզրակացնենք։ Վերեւում ասվածները կարելի յե բաժանել հինգ մոմենտի։

Մեր յերկրի զարգացման նոր պայմանները և դրանից բղխող պիտներ-կազմակերպության զարգացման նոր պայմանները մեր առաջ նոր ձեռվ են դնում ինքնազործության պրոբլեմը, նոր ձեռվ են դնում յերեխաներին կազմակերպության ղեկավարման դործին մասնակից գարձնելու պրոբլեմը։ Չի կարելի լուծել ինքնազործության պրոբլեմը, առանց յերեխաներին մասնակից գարձնելու կազմակերպության ղեկավարմանը, սուանց պիտնե-

բական ակտիվի հայտաբերման և պատրաստման ճիշտ սխտեմի:

Ակտիվ յերեխաները շատ են, բայց մանկական ակտիվը պետք է ստեղծել, աճեցնել, դաստիարակել: Իսկ այդ պահանջում է մանկական ակտիվի հետ աշխատելու վորոշ սխտեմ, և վոչ թե հույսը դնել պատահականության վրա:

Ինքնագործության պրոբլեմը պիոներկազմակերպության մեջ չի կարելի լուծել, առանց լուծելու դեկավարների պրոբլեմը:

Յել ամենից գլխավորը, չպետք ե խաղալ պիոներկազմակերպության ափրոջ գերը, այլ յուրջ կերպով աշխատել յերեխաների ակտիվի հետ: Նա, ով խորապես չի հասկանա, վոր առանց մանկական ինքնագործության՝ չի կարող լինել խիական պիոներական կազմակերպություն, նա, ով չի հասկանա, վոր առանց հենվելու մանկական ակտիվի վրա, առանց նրա ոգնության, մենք չենք կարող իրադործել մեր խնդիրները, — նա միայն կարող ե խաղալ, կեղծել յերեխաների հետ, նա յերբեք չի կարող լուծել մեր առաջ դրված պրոբլեմները, նա յերբեք չի կարող իրադործել յերեխաների կոմունիստական դաստիարակության գործի դեկավարման ինդիրները:

Բայց մենք կարո՞ղ ենք լուծել ինքնագործության խնդիրը: Այդ ապացուցում է մեր շարժման կոյեկտիվ փորձը, սոցիալիստական շինարարության հաջողությունների հսկայա-

կան աճումը և նրա հետ միասին՝ մանկական մասսաների ակտիվության աճումը, վորոնք պայմաններ են ստեղծում ել ավելի ծավալելու պիոներական շարժումը:

ՍՏՈՒԳԻՉԱՐՑԵՐ

1. Ի՞նչպես պետք է հասկանալ այս թեզիսը, վոր առանց յերեխաների ինքնագործության չկա պիոներական կազմակերպություն։ Ի՞նչու ներկա պայմաններում նոր ձևով եղբարձում պիոներական ինքնագործության պրոբլեմը։ Վո՞րն ե այդ նորությունը։

2. Ինչո՞ւ մենք ասում ենք, վոր մանկական ակտիվի հետ տարվող հատուկ աշխատանքը բնավ չի նշանակում, վոր պիոներական մասսան պաստիվ ե։ Վորո՞նք են պիոներական ակտիվի անելիքները։

3. Ինչո՞ւ վնասակար ե կոլվարների դերի թերագնահատումը մանկական ինքնագործության պրոբլեմը լուծելիս։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039241

51

(124)
ԳՐԱԾ ՅՈ ԿՈՊ.

A I
4404



Մ. Ռեյխրուդ
Դետская самодеятельность и работа
с пионерским активом

Госиздат 1933 Эреванъ